Խաչիկ Դաշտենց

Ռանչպարների Կանչը

8

ԽԱԼԻԼ

Գևորգ Չաուշը արագ էր քայլում, իսկ ես ուղղակի վազում էի, որ նրան հասնեմ: Լսել էի, որ նա միշտ ձիով է շրջում, բայց այս անգամ ինչու էր ոտքով և այդպիսի փութկոտությամբ՝ չհասկացա: Ճիշտն ասած, վախենում էի նրանից: Իմ աչքի առաջ նա սպանել էր իր հորեղբորը, ականջովս լսեցի, թե ինչպես դաշույնի տակ էր առել գեղաշենցի ոես Ավեին: Ծուռ սասունցի է, հանկարծ կտա մի ձորի մեջ կսպանի ինձ, անցնում էր իմ մտքով, չնայած ինքս էլ պակաս ծուռ չէի, թեև հասակով շատ փոքր նրանից:

Ամենից շատ մտածում էի, թե նա որտեղից եկավ, և գտավ ինձ ծերունի ջրաղացպանի շողտան մեջ: Արդյոք դա պատահակա՞ն հանդիպում էր, թե նպատակով:

Հանկարծ կանգ առավ:

Դու քիչ առաջ որտե՞ղ էիր, հարցրեց:

Խութեցի Միրոյի շողտան մեջ:

Իսկ մինչև ա՞յդ:

Յատուկ Պոէմ

Մի շաբաթ առաջ Կարմրակ վանքի գերեզմանի վրա էի, դրանից մի օր հետո՝ Բաղեշի բանտում: Այսօր այստեղ եմ, իսկ թե վաղը որտե՞ղ կլինեմ՝ հայտնի չէ:

Դու այսօրվանից ինձ հետ կլինես, ասաց Գևորգ Չաուշը և ինձ տարավ դեպի Շմլակի կողմերը:

Երբ այդ գյուղի տակ հասանք, նորից կանգնեց:

Դու Կիրճի ճանապարհը գիտե՞ս, հարցրեց:

Գիտեմ, ասացի, Արաբոյի ավետարանը այդ Կիրճի մեջ է կորել:

Լսիր, ուրեմն, Խալիլ աղան Մուշ է եկել և վաղ առավոտ Խաչուկի սարով պետք է վերադառնա Սասուն: Այդ այն մարդն է, որ կտրել է Սերոբ Աղբյուրի գլուխը: Մենք Բռնաշենի անտառի մեջ նրա գլուխը պիտի կտրենք:

Երբեք չկասկածեցի, որ Խալիլի գլուխը պիտի թռչի, որովհետև ասողը Գևորգ Չաուշն էր:

Ինչո՞վ կարող եմ օգնել, ասացի:

Դու այդ Կիրճով գնա դեպի Բռնաշեն: Շմլակից վերև անտառի մեջ յոթ ջոթ քարեր կան. չորս քարը աջ թևի վրա, երեքը՝ ձախ: Աջակողմյան նախավերջին ջոթքարը ծակ է:

Այդ քարին նստած սպասիր: Լուսադեմին քեզ կմոտենան երեք զինված տղամարդ գյուղացու մաշված շորերով, որոնցից մեկի ձեռքին փայտ կա: Ձեռնափայտ ունեցողի անունը քեզ չեմ ասի, իսկ մյուս երկուսից առաջինի անունը Մակար է, երկրորդինը՝ Գալե: Մակարը Գալեի քեռին է: Հենց որ նրանք երևացին, կասես՝ քեռիներ, էսօր ուրբա՞թ է, թե՞ շաբաթ: Ուրիշ բան չասես: Քո օգնությունը այդ կլինի:

Շմլակի ճակատին հասնելով մենք բաժանվեցինք: Գևորգ Չաուշը գնաց դեպի վերին Մառնիկ, իսկ ես դիմեցի դեպի Շմլակի Կիրճը: Այդ քարերի տեղը ես լավ գիտեի: Լեռը այդտեղ ոլորապտույտ էր և ճամփան անցնում էր ոլորտների

վրայով: Ներքևը ձոր էր, իսկ վերևը՝ խիտ մացառներով ծածկված անտառ:

Շմլակից դեպի Բռնաշեն տանող ճանապարհի այդ մասը Կիրճ էր կոչվում, և ես Արաբոյի հետ շատ էի գնացել-եկել այդ կիրճով: Մանավանդ լավ հիշում էի կարմիր ալուչների ձորը: Կիրճի ամենանեղ տեղից մի կեռման ծառերի տակով բարձրանում էր դեպի Խաչասար: Ալուչների պուրակը այդ կեռմանի կողքին էր:

Հասա թե չէ՝ որոնեցի գտա այդ յոթ ջոթքարերը և մոտենալով նստեցի աջակողմյան ծակ քարին, ինչպես ասված էր:

նախ երևացին Սպաղանաց Մակարը և փայտ բռնած գյուղացին: Ապա երևաց Գալեն: Ձեռնափայտով տղամարդը մի ձեռքով հենված էր Գալեի թևին: Ես նրան հեշտությամբ ճանաչեցի «ղոնդաղչի» Անդրանիկն էր: Աչքի տակ, աջ այտի վրա մի գորշագույն խալ կար: Դեռ չմոտեցած՝ ես հեռվից ձայն տվեցի. «Քեռիներ, էսօր ուրբա՞թ է, թե շաբաթ»:

Երեքն էլ անմիջապես կանգ առան:

Աֆերիմ, տղաս, ասաց Անդրանիկը: Այս լեռան անունը ի՞նչ է:

Խաչասար:

Ինձ թողեցին ջոթ քարի մոտ և երեքով քաշվեցին մի ծառի տակ:

Սպաղանաց Մակարին մեջքից ճանաչեցի: Դա այն, թիկնեղ ծերունին էր, որին տեսել էի Տաղվրնիկում Չատոյի գոմի պատի տակ՝ մի ձեռքին ծխամորճ, մյուս ձեռքը նեցուկ արած ճակատին» Նույն աժդահա տղամարդն էր, խոշոր, հաստ տրեխներով, աչքերը արնոտ:

Աշիրեթապետ Խալիլ աղայի ազդեցությունը տարածվում էր Սասունից մինչև Մուշ: Իր կտրածը կտրած էր և կապածը՝ կապած սուլթանի տիրության այդ մասում: Բողոքողին խոշտանգում էր և տնով-տեղով ոչնչացնում՝ հայ լիներ, թե քուրդ: Այս ցեղապետը ոչ միայն նենգությամբ սպանել էր Աղբյուր Սերոբին և նրա գլուխը ցույցի դրել Բիթլիսի հրապարակում, այլև դրանից մի քանի ամիս առաջ կառավարության զորքերով քանդել էր Տալվորիկի Սպաղանք գյուղը և սրի

քաշել բնակիչներին:

Այդ էր պատճառը, որ ծերունի Մակարի աչքերը արնոտ էին: Կարծես կատաղած գոմեշ լիներ: Սպաղանցին Անդրանիկից և Գալեից բաժանվելով, եկավ նստեց ծակ քարին՝ ձեռքը աբայի տակով դաշույնի կոթին դրած: Նա հանկարծ պոկվեց տեղից և ընկերներին մոտենալով՝ ասաց.

Տղաներ, մենք սխալ տեղ ենք ընտրել: Երթանք Ծծմա– կա Քիթը և առաջը կտրենք:

Անդրանիկը առարկեց ասելով, թե Ծծմակում պահվելու տեղ չկա. այդ վայրը Մուշին մոտիկ է, կռիվը կշարունակվի մինչև երեկո, փամփուշտը կվերջանա և իրենք կվրիպեն:

Այդ խոսքի վրա Գևորգ Չաուշը երևաց:

Անդրանիկը հարցրեց.

Խալիլը Մո՞շ է:

Մուշից դուրս է եկել:

Մառնի՞կ է գնացել, թե Ալվառինջ:

Ալվառինջով բարձրացել է Վերին Մառնիկ:

Ինչո՞վ է զբաղված:

Գյուղերից բռնատուրք է հավաքում:

Ե՞րբ է գալու և ո՛ր ճանապարհով:

Լուսադեմին դուրս է գալու Մառնիկից և անցնելու է Կիրճի ճանապարհով:

Մերոնցից ո՞վ կա հետը:

Ամեն բան կարգադրված է, ասաց Գևորգը: Նրա շքախմբի հետ լինելու է նաև Մառնկա Պողեն և մի քանի հայ մշակներ:

Սպաղանքը քանդելու և Սերոբին սպանելու համար կառավարությունը Բշարե Խալիլին հրավիրել էր Մուշ՝ փաշայական աստիճան տալու և պարգևատրելու սուլթանի ուղարկած պատվանշանով:

Մի ուրիշ պատճառ էլ կար:

Խալիլ աղայի և Շեկո տան աշիրեթները իրար թշնամի էին: Շեկո քրդերից մեկը վերջին կռվում սպանել էր նալիլի որդուն: Խալիլը Մուշ էր եկել սուլթանի շքանշանը ստանալու, միաժամանակ կառավարությունից զորք պահանջելու, որ պատերազմ սկսի Շեկոների դեմ: Շեկո տան քրդերը տագնապի մեղ էին և արդեն գաղտնի տեսակցություն էին ունեցել Անդրանիկի հետ, խնդրելով նրա օգնությունը:

Արևը սկսել էր բարձրանալ, երբ Գևորգը սուլեց: Ու ես տեսա, թե ինչպես մի քանի նոր վրիժառուներ եկան և Անդրանիկը, Գևորգն ու Մակարը նրանց միացած արագորեն դիրքեր գրավեցին Կիրճի աջակողմում:

Գալեն իբրև անփորձ զինվոր մտավ ջոթքարի ետև, Անդրանիկի կողքին:

Հոկտեմբեր ամիսն էր և օրը, կարծեմ, ուրբաթ: Անտառը դեղնած էր: Մասուրն ու վարդալուջը կարմրել, կախվել էին թփերից:

Շատ չանցած երևացին մի քանի զինված ղոլամներ, որոնք գնում էին առջևից իրենց հետ վարելով ավանակների բեռնված մի քարավան: Շուտով ծառերի միջից երևաց աշիրեթապետի ձիու գլուխը: Խալիլ աղան թեթևակի կռացած էր դեպի առաջ, բաշլըղի թևերը փաթաթած վզի շուրջ: Ետևից զինված ձիավորներ էին գալիս, իսկ կողքից քայլում էր Մառնիկ գյուղի տանուտերը երեք հայ ծառաների հետ:

Խալիլի ձին հանկարծ ընդոստ կանգ առավ և տարօրինակ վրնջաց:

Աղա՛, ես քեզ բան ասացի, արի էսօր մի երթա, ետ դարձիր, քո առաջ փորձանք կա, խրատեց տանտերը:

Լաո, որձ ձի է, հազար բան մտքեն կանցնի: Երթանք, ասաց աղան, ընթացքը շարունակելով:

Մի քանի քայլի վրա ձին նորից վրնջաց ականջները խաղացնելով: Տանուտերը դարձյալ զգուշացրեց, որ ետ դառնան: Այդ ժամանակ հայ ծառաներից մեկը, որի անունը Պողե էր, ետևից ծածուկ մի կռուփ զարկեց տանուտերին, որ նշանակում էր թե՝ լռիր:

Դե, լավ, ճամփացույցը դու ես, դու առաջնորդիր, Պողե, ասաց տանուտերը, իր տեղը զիջելով ծառային, իսկ ինքը ետ դարձավ: Ճամփացույց Պողեն ընկավ Խալիլի ձիու առաջ ու գնացին: Երբ հասնում էին Կիրճի ամենաանեղ տեղը, Պողեն ասաց. «Աղա, դու ուշիկ ձին քաշիր գնա, ես իմ չարուխի թելերը կապեմ ու գամ հասնեմ»: Այդ պատրվակով Պողեն ետ մնաց: Հայ և քուրդ ծառաներից մի քանիսը նրան հետևելով գնացին մացառների ետևը ջուր թափելու:

Որտեղից-որտեղ մի անծեղ կռավեց ծառի վրա՝ ճյուզից– ճյուզ թռչելով: Նույն միջոցին ձին փեքոլ արեց և չէր ուզում առաջ գնալ:

Չէ, էսօր իմ առաջ հաստատ փորձանք կա, իր հեծյալ պահապաններին դարձավ Խալիլ աղան և արագությամբ ձիու գլուխը շուռ տվեց, որ փախչի: Բայց նրանք արդեն խրվել էին Կիրճի ամենաանեղ տեղը, որտեղից դուրս պրծնելը հեշտ չէր:

Փաշա, եթե Խալիլ աղային սպանենք, ինձ մի թվանք կտաս, թախանձեց Գալեն:

Իմ առաջին զարկածի հրացանը քոնն է, ասաց Անդրանիկը:

Սպաղանաց Մակարը անհամբեր էր և առաջինը նա կրակեց: Հարվածը վրիպեց՝ վայր գլորելով մի հեծյալի: Խալիլը սարսափահար զարկեց ձիու կողերին, քառասմբակ արշավելով: Մակարը դիրքը թողած վազեց նրա ետևից:

Թշվառական, դու իմ ձեռքից չես պրծնի, գոռաց Անդրանիկը, գլուխը ծակ քարի ետևից հանելով: Այդ ձայնի վրա աշիրեթապետը ձին կանգնեցրեց, բայց նորից

արագությամբ սկսեց վազեցնել: Ջին էր հեծյալին փախցնողը: Անդրանիկը կրակեց: Ջին վայր ընկավ: Խալիլի մի ոտքը մնաց ասպանդակի մեջ: Այդ վիճակով վիրավոր ձին իր տիրոջը բավական տեղ քարշ տալով տարավ: Ձիավորներից մեկը հրացանը Անդրանիկին ուղղեց: Երկրորդ գնդակը կանխեց հարվածը, վայր տապալելով ձիավորին:

Այդ հրացանը Գալեին տարեք, կարգադրեց Անդրանիկը երկու զինվորի, որոնցից մեկը Մառնկա Պողեն էր, և զենքը ձեռքին, դաշույնը ատամների մեջ սեղմած խոյացավ Խալիլի վրա: Նրան տեսնելով Խալիլը վախից աչքերը փակեց:

Աշիրեթապետը ձիու հետ ընկած էր Կիրճի մեջ՝ անկարող շարժվելու: Անդրանիկը և Մակարը բռնեցին Խալիլի թևերից, բարձրացրին թամբից, ոտքերը ասպանդակից հանեցին և բերեցին ծակ քարի մոտ: Բարձրահասակ, լայնաթիկունք տղամարդ էր, հագին չուխա վերարկու, մեջքին մետաքսե գոտի, բաշլըղը վզի շուրջ:

Գևորգ Չաուշն ու Անդրանիկը երդվել էին, որ Սպաղանաց Մակարին է պատկանելու Խալիլ աղային պատմելու իրավունքը, եթե նրան ողջ բռնելու լինեն:

Գալեն Անդրանիկի ուղարկած հրացանը վերցնելով գնացել էր զինված ղոլամների առաջը կտրելու: Մակարը ուժեղ կրակոցներ լսելով շտապեց Գալեին օգնության:

Անդրանիկը դահճին նստեցրեց ծակ քարին և նրա գլխի երկայն մազերը հավաքեց բռի մեջ: Հանկարծ հևասպառ Կիրճի մեջ ցատկեց Գևորգ Չաուշը՝ հեռվից գոռալով.

Մի զարկիր, բան պիտի հարցնեմ:

Անդրանիկը քրդերեն լավ չգիտեր:

Գևորգ, ինչ որ կասեմ՝ թարգմանիր նրան, ասաց Անդրանիկը:

Բշարե Խալիլ որ կասեն՝ դու՞ ես:

Այո, պատասխանեց Խալիլը:

Սերոբ Փաշի գլուխը դու կտրեցիր:

Խալիլը լուռ էր:

Դու՞ էիր, որ Սպաղանք գյուղը քանդեցիր և սպանված ռանչպարներին Մակարի տան մեջ լցնելով վառեցիր:

Նա դարձյալ լուռ էր և գլուխը կախ նայում էր գետնին:

Դու՞ էիր, որ պատրաստվում էիր սուլթանի զորքով ու զենքով հարձակվել Շեկո տան քրդերի վրա:

Բա՛վ է, բա՛վ է, ժամանակս լրացավ, միայն խնդրում եմ իմ դիակը չփչացնեք:

Դու Սերոբ Աղբյուրի գլուխը մեռած տեղը կտրեցիր, իսկ ես քեզ ողջ բռնելով գլուխդ կկտրեմ: Գևո՛րգ, մեկդի քաշիր այդ բաշլըղը, բռռաց Անդրանիկը:

Գևորգը բաշլըղը հանեց Խալիլի վզից:

Եվ քանի որ Մակարն ուշանում էր, Անդրանիկը դաշույնը իջեցրեց...

Մառնկա Պողեն վազեց, որ բռնի, բայց ես ավելի արագությամբ վրա հասնելով, գլուխը բերելով տվեցի Անդրանիկին: Նրան հանձնեցի նաև իր ձեռնափայտը, որ նետել էր ծառերի տակ:

Այս Խաչասարը ինձ բոլորովին բուժեց, տղաս: Իմ հոդացավն անցավ: Ասկե ետքը ինձ ոչ ձեռնափայտ է պետք, ոչ տաք ավազ: Իմ ուզածը հիմա մի տոպրակ է:

Մացառներից խշրտոց լսվեց:

Հրացանները այդ կողմը ուղղվեցին:

Յատուկ Պոէմ

Փաշա՛, մի զարկեք, ես հայ եմ, և տոպրակը ուսին մի գյուղացի թփուտից դուրս գալով, այլայլված կանգնեց մեր առաջ: Եկել էր անտառ ալուջ ժողովելու:

Այդ լեռան վերևը դեռ քոչվորական վրաններ կային: Հավարն արդեն ընկած էր և լեռը իրար անցած:

Հասե՛ք, ջան-ֆիդաները Խալիլ աղուն սպանեցին, սարե-սար վազելով ձայն էին տալիս քրդերը իրար:

Գևորգ, այս պատանին կտրիճ տղա է: Եթե նա չլիներ, Խալիլ աղայի գլուխը գլորվելով մինչև ձորը կերթար, ապա դառնալով շվարած գյուղացուն՝ ասաց.

Քո ալուջները ինչպես ուզում ես՝ տար: Ես քեզ պարտք մնացի մի տոպրակ:

Կիրճից ելավ Գալեն, բերելով Խալիլի ձիու գորգապատ թամբը: Մի բրդոտ շուն նրա ոտքերի մոտով գետինը հոտոտելով նետվեց Կիրճի մեջ: Ում շունն էր՝ չիմացանք:

Գևորգ, դու քո հարցը մոռացար, հիշեց Անդրանիկը:

Մեռածին էլ ի՞նչ հարց:

Ես պարկը շալակեցի և մենք ելանք ճամփա դեպի Սասուն:

ԱՍՈՐԻ ՅԵՂԱՊԵՏԻ ՁԻՆ

Մենք արագ քայլերով անցանք Հավատորիկի սարերը և թրջվեցինք Քոփ գյուղի վրա:

Ահա Դուքանե Զեֆրան՝ Շենիքի գլուխը, ասաց Սպաղանաց Մակարը, ձեռքը ուղղելով դեպի շենիկցիների հեռավոր ամառանոցը Կուրտիք լեռան լանջին: Էնտեղ եղավ «Յոթ Գդալի կռիվը», շարունակեց ծերունին:

1882 թվականի ամռանը շենիկցիների ամառանոցից փախցրած յոթ գդալի պատճառով շաբաթներ տևող մեծ կռիվ է ծագում խոշկանցի զինված քրդերի և

հայերի միջև: Շենիքցիներին հաջողվում է իրենց լեռներից վռնդել խոշկանցի աղաներին և վերադարձնել բռնագրաված գդալները:

Քեռի Մակարն ասաց, որ ինքը մասնակցել է շենիկցիների այդ ճակատամարտին և իր թիկունքին երկու հին սպի ունի այգ տարիներից մնացած:

էն օրվանից չախմախլին իմ ձեռքից չի իջել, ավելացրեց ծերունին:

Քոփը «Արջնաց երկրի» յոթ գյուղերից մեկն էր և պատկանում էր Խալիլ աղային:

Այդ գյուղի ռեսը և Դհոլ թաղի ռեսը, որ հյուր էր այդտեղ, օջախի մոտ նստած չիբուխ էին ծխում: Հայտնի էր, որ կատարվածի մասին տեղյակ չէին:

Ձևական բարևից հետո Անդրանիկը դիմեց Քոփի մեծավորին:

Ի՞նչ լուր կա, ռես:

Դրսեն եկողը դուք եք, լուրը ձեզ մոտ է, ասաց ռեսը: Ասում են Մուշից զորք պիտի գա Շեկո տան վրա:

Մենք էլ լսած ենք, ափո, բայց չգիտենք, թե որքան ստույգ է:

Մեր աղան հիմա Մ ուշ է: Մեր մարդիկ նրան տվել են երեք հազար զորք, վեց հարյուր ձիավոր և թնդանոթ, որ գա շեկոների վրա: Ինչու՞ եք եկել էս կողմերը: Չէ որ Քոփը Խալիլի գյուղն է:

Ձեր աղան հրավիրել է մեզ:

Ի՞նչ բանի համար:

Տեսակցության համար:

Մեր աղա՞ն, ասաց Քոփի ռեսը աչքերը զարմանքից մեզ վրա պտտացնելով:

Այո, ձեր աղան:

Մեր աղան քո գլուխը կտրելու հրաման է բերած Պոլսեն: Սերոբի գլխից հետո քո գլուխը կտրելը հեշտացավ: Տեսակցության մասին խոսք լինել չի կարող: Ռեսը լռեց և սկսեց ոտքերով աթոռին զարկել:

Կփափագե՞ս աղայիդ տեսնել, հարցրեց Անդրանիկը:

Աղայի՞ս: Ինչպե՞ս:

Եթե կփափագես, կարող ես տեսնել:

Քոփի մեծավորը Անդրանիկի դեմքի պաղարյուն արտահայտությունից սաստիկ շփոթված մերթ մեկիս, մերթ մեկելի դեմքին էր նայում:

Իրա՞վ է, ռես, որ Խալիլ աղան Քոփ է եկել, հարցրեց Դհոլ թաղի ռեսը:

Ինչ կխոսես: Եթե աղան Քոփ գար, ամբողջ գյուղը պիտի գիտենար:

Եկել է, ասաց Գևորգ Չաուշը, և տոպրակը իմ մեջքից առնելով օջախի լույսի առջև գլխիվայր շրջեց:

Ահա աղադ:

Դհոլ թաղի ռեսը աչքի ծայրով նայեց նրան: Խալիլի լեզուն ատամների միջից դուրս էր ընկած: Քոփի ծերունին մեկից շտկվեց նստած տեղից տեսածը ստուգելու: Հանկարծ Դհոլ թաղի ռեսը չիբուխը վերցնելով սկսեց գլխին զարկել, գայրացած գոչելով.

... ուտեիր, լավ չէ՞ր:

Ես իմ բեռը շալակեցի և մենք ռեսի տնից դուրս եկանք: Բավական հեռացել էինք Քոփից, երբ տեսանք մի քուրդ լեռան գագաթից վազում է դեպի Շենիք և Սեմալ գյուղերը բարձրաձայն աղաղակելով.

Ուրախացե՛ք, հայեր և Շեկո տան քրդեր, ջան ֆիդայիները Խալիլ աղային սպանեցին: Բռնաշենի կիրճում հրացանաձգություն էր: Թոզ ու դումանը երկինքն է բռնել:

Աչքովդ տեսա՞ր, որ սպանեցին, արձագանքեց Խալիչի աշիրեթին թշնամի մի ուրիշ քուրդ՝ Յոթ գդալի հակառակ կողմից նրան ընդառաջ վազելով:

Տեսա՛, տեսա՛: Մի շուն կանգնած լիզում էր Խալիլի արյունը: Սև սուգի մեջ են Խալիլի տունը և նրա կնիկը:

Խալիլի կնիկը եթե սուգի մեջ է, թող ինձ հետ ամուսնանա, ես նրա սուգը կփարատեմ, պատասխանեց ընդառաջ վազող քուրդը և ետ դառնալով Մրկեմոզանի խոտավետ մարգագետնով սլացավ դեպի Շենիք՝ ուրախալի լուրը բարեկամ քրդերին հայտնելու:

Շուտով Շեկո տան հարյուրավոր քրդեր ցնծագին աղաղակներով շարժվեցին դեպի մեր կողմը: Բոլորն էլ գունագեղ տարազ էին հագած, բրդյա սև-սպիտակ քոլոզների շուրջը փաթաթած գույնզգույն թաշկինակներ, ոմանք զենքով, շատերն էլ առանց զենքի:

Առջևից եկողը Շեկո տան մեծավորն էր՝ իր հավատարիմ մարդկանց հետ ձիերը հեծած: Նրա ազդանշանով բոլորը իջան թամբերից և ձեռքները կրծքներին՝ խոնարհվեցին Գևորգ Չաուշի և Շապինանդի առաջ:

Խուաշբե Անդրանիկ փաշա, խուաշբե Գևորգ Չաուշ, գոչեցին միաբերան և երեք անգամ իրենց մեծավորի հետ խոնարհվելով ու բարձրանալով, գոհունակություն հայտնեցին իրենց ամենամեծ թշնամուն ոչնչացած տեսնելու համար:

Տարածել էին, որ Անդրանիկի վզից կախված է Բշարե Խալիլի հմայիլը և նրան կյանքում այլևս ոչ մի գնդակ չի դիպչի: Մանրամասնորեն պատմում էին, թե ով է կտրել բալաքցի ավազակապետի գլուխը: Ոմանք ասում էին, թե Շապինանդն է կտրել, մյուսները թե՝ Գևորգ Չաուշը: Մի հարվածով դաշույնը մինչև խոսափող իջավ, պարծենում էր նրանցից մեկը իբրև ականատես: Բերնեբերան փախցնում էին Սպաղանաց Մակարի և Գալեի անունները, հսկայական քաջություն վերագրելով նաև Մառնկա Պողեին, որ անզգույշ գյուղապետին մի կռուփ տալով ստիպել էր ետ դառնալ, իրենց աշիրեթի կատաղի թշնամուն առաջնորդելով հայդուկների թաքստոցի վրա:

նրանք իրենց հիացմունքի մի փոքրիկ բաժինը հանում էին նմանապես և ինձ համար, զարմացած նայելով իմ պատանեկան խրոխտ դեմքին, հերոսական նշաններ որոնելով այնտեղ: Օ՛, եթե իմանային, որ Խալիլի գլուխը այդ միջոցին գտնվում էր իմ շալակին կապված ալուջի պարկի մեջ:

Ու հանկարծ այդ ամբողջ բազմությունը սկսեց երգել հայ ֆիդայիներին նվիրված մի երգ.

Օ՛, Սասունի կապուտակ երկինք, մեկ էլ քեզ կտեսնե՞մ իմ գլխիս վերև, մեկ էլ կլսե՞մ այդ երգը կյանքում:

Անդրանիկը, Գևորգ Չաուշը, քեռի Մակարը, Գալեն և Մառնկա Պողեն մանկան անհոգությամբ նայում էին այդ բազմությանը, կարծես այդ երգը ոչ մի առնչություն չուներ իրենց հետ, կարծես այդ երգի հերոսները իրենք չէին: Պատռված, մաշված էին նրանց հագուստները: Այնքան հին ու մաշված էին, որ մեկ-երկուսի մարմինը երևում էր միջից: Եվ անկարելի էր հավատալ, որ այդ գովասանքը նրանց էր ուղղված:

Այդ երգից հետո, բազմությունը ճեղքելով, Անդրանիկին և Գևորգ Չաուշին մոտեցավ մի թիկնեղ ծերունի: Ասորի էր ազգով: Մորուքը շատությունից կոխել էր ծոցը:

Մի որդի ուներ և մի ձի:

Ձին տվեց Անդրանիկին, իսկ որդուն՝ Գևորգ Չաուշին և ասաց.

Ձիուս անունը Ասլան է, որդուս անունը՝ Աբդելո: Երկուսն էլ սասունցի են, ծնված Խարզանում: Կարմիր իրիցոց ավետարանում գրված է, որ ս. Աղբերիկի վանքի առաջին վանահայրը եղել է ասորի Աբդելոն: Իմ տոհմի ծագումը Աբդելոյից է: Ասորին երեք բան չի կարող զիջել ուրիշի՝ ձի, զենք և զավակ: Բայց դուք ուրիշ չեք, դուք մերն եք, և ես իմ ձին ու որդին նվիրում եմ ձեզ: Իմ հայրը սպանվել է «Յոթ գդալի» կռվին, շենիքցիների կողմից կռվելով խոշկանցի զինված աղաների դեմ: Էսօր մեր ամենամեծ օրն է, որովհետև ոչնչացված է մեր և ձեր ամենամեծ թշնամին, որն ուզում էր սուլթանի զորքով և իր աշիրեթով հարձակվել մեր վրա:

Ընդունեք ծերունի ցեղապետիս այս համեստ նվերը հայրենիքը կորցրած բոլոր ասորիների և Շեկո տան քրդերի կողմից և թող հավիտյան անխախտ մնա հայ, քուրդ և ասորի լեռնականների բարեկամությունը:

Բարձրահասակ, գեղադեմ երիտասարդ էր Աբդելոն: Բայց իմ ուշադրությունը ամենից շատ գրավեց ասորի ցեղապետի ձին: Սպիտակին խառը կարմրամազ մի մտրուկ էր Ասլանը, կապույտ փուլերով պճնված: Գլուխը փոքր էր, աչքերը՝ մանր ու խելացի: Տեսքով վագրի էր նման, ոտքերը բարձր ու բարակ, ռունգները լայն բացված: Արևի փայլի տակ ամբողջ մորթը կարմիր երանգներ էր ստանում:

Հրաժեշտ տալով մեզ դիմավորելու եկած քրդերի բազմությանը և ասորի ծերունուն ու վերջին անգամ հայացք նետելով Շենիք և Սեմալ գյուղերի ամառանոցներին, մենք դուրս եկանք «Յոթ գդալի» լեռնադաշտից, մեզ հետ տանելով ցեղապետի որդուն և նրա ձիու քուռակին՝ Ասլանին:

Ճանապարհին Անդրանիկը կարգադրեց, որ իրենից առաջ շտապեմ Գելի, մի ապահով տեղ պատրաստելու ասորի ցեղապետի ձիու համար: